ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-339³-13.07.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի 1-ին հավելվածում՝

1)	«Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ	14.00».

Տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ	14.00».

2)	«Ինքնավար մարմնի անդամ	12.00».

Տողից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր տողերով.

	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ	12.00
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար	12.00».

3)	«Հաշվեքննիչ պալատի անդամ	10.00».

Տողից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր տողով.

	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ	10.00».

Հոդված 2. Հավելվածում հանել հետեւյալ տողը՝

	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար	8.00»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: